



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

9 փետրվարի 2015 թ. № 12 - Ա/1

ք. Երևան

«ԵՐԻՏԱՍԱՐԴ» ՕՆ-ԼԱՅՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ»
ԾՐԱԳԻՐՆ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) № 1 հավելվածի № 1 աղյուսակի 08 բաժնի 04 խմբի 01 դասի «01. Երիտասարդական ծրագրեր» ծրագրի՝ հրամայում եմ՝

1. Հաստատել «Երիտասարդ» օն-լայն պարբերական» ծրագիրը՝ համաձայն № 1 հավելվածի:

2. Հաստատել «Երիտասարդ» օն-լայն պարբերական» ծրագրի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն № 2 հավելվածի:

3. Օրենքի № 1 հավելվածի № 16 աղյուսակի «Երիտասարդական պետական քաղաքականության մասին էլեկտրոնային տեղեկատվության ապահովում, էլեկտրոնային թերթի հրատարակում» տողով նախատեսված միջոցներից սույն հրամանի 1-ին կետի կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգի «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 11000000 (տասնմեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն № 2 հավելվածի:



Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

ԾՐԱԳԻՐ
««ԵՐԻՏԱՍԱՐԴ» ՕՆ-ԼԱՅՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ»

I. Ծրագրի նկարագրությունը, հիմնավորումը

1. 21-րդ դարը նոր մարտահրավերներ է բերել երիտասարդների համար: Տեղեկատվական տեխնոլոգիաների այս դարում շատ են կարևորվել նաև ոչ նյութական տեղեկատվությունը, դրա մշակումն ու տարածումը: Այստեղ օգնում են համացանցն ու նրա ընձեռած հնարավորությունները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այսօր հայ երիտասարդների մեծամասնությունը տեղեկատվություն ստանում է ոչ թե գրքերից, թերթերից, բազմապիսի ու բազմաբովանդակ ամսագրերից, այլ համացանցից: Ուստի շատ կարևոր է համացանցի միջոցով ստեղծել օն-լայն երիտասարդական պարբերական, որի միջոցով կլրացվի երիտասարդության տեղեկացվածության բացը, երիտասարդները կկարողանան իրենց հուզող հարցերի, իրենց մտահոգող խնդիրների բարձրաձայնումն ու լուծման ուղիները տեսնել այդ էլեկտրոնային պարբերականում:

2. 2009 թվականից գործող «Երիտասարդ» օն-լայն պարբերականի հիմնական նպատակն է երիտասարդության գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ հավաքել տեղեկատվություն, մշակել ու www.eritasard.am կայքի միջոցով տարածել հասարակության, մասնավորապես՝ երիտասարդության շրջանում: Գլխավոր խնդիրն է բարձրացնել երիտասարդության իրազեկվածության մակարդակը, նրանց խնդիրները լսելի դարձնել հասարակության լայն շրջանակներին, ինչպես նաև երիտասարդությանը տեղեկացնել պետական երիտասարդական քաղաքականության մասին՝ այդ կերպ ապահովելով նաև երիտասարդական պետական քաղաքականության թափանցիկությունն ու հրապարակայնությունը: Այսպիսով՝ «Երիտասարդ» օն-լայն պարբերականի թիրախային հիմնական խումբը երիտասարդությունն է՝ իր գրեթե բոլոր շերտերով ու խնդիրներով:

3. www.eritasard.am-ն իր տեսակով միակն է Հայաստանում, քանի որ անդրադառնում է հատկապես երիտասարդությանը հուզող և հետաքրքրող ոլորտներին: Նորությունները թարմացվում են ամեն օր:

4. «Երիտասարդ» օն-լայն պարբերականն ունի հինգ հիմնական բաժին՝ «Լուրեր», «Վերլուծություն», «Հարցազրույց», «Պատկերասրահ», «Հայտարարություն» և հետևյալ խորագրերը՝ «Քաղաք», «Քաղաքական», «Մարզեր», «Մշակույթ», «Ժամանց», «Մարզական», «Կրթություն», «Միջազգային»:

II. Ծրագրի իրականացման ժամկետները և կարգը

5. Ծրագիրը մեկնարկելու է 2015 թվականի մարտի 1-ին և կավարտվի 2015 թվականի դեկտեմբերի 30-ին: Նշված ժամկետներում տարբեր բաժիններից ու խորագրերից բաղկացած օն-լայն պարբերականը պետք է պարբերաբար թարմացվի և ներկայանա հանրությանը:

6. Կայքի սպասարկման ժամանակահատվածում ծրագրի հիմնական բաժինները պետք է թարմացվեն առնվազն հետևյալ չափաբաժիններով.

- 1) «Նորություններ»՝ 880 նորություն,
- 2) «Վերլուծություն»՝ 15 վերլուծական հոդված,
- 3) «Հարցազրույց»՝ 45 հարցազրույց,
- 4) «Պատկերասրահ»՝ 200 միջոցառման լուսանկարներ,

5) «Հայտարարություններ»՝ համաձայն Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի տրամադրման:

7. Կայքի սպասարկման ժամանակահատվածում կայքում պետք է ավելացվի ևս մեկ՝ «Հրատարակություններ» բաժինը, որտեղ կտեղադրվեն Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգի «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հրատարակությունները:

8. Նյութերը պետք է տեղադրվեն ինչպես հայերեն, այնպես էլ կայքի անգլերեն տարբերակում: Տեղադրվող նյութերը պետք է համամասնորեն թարմացվեն տարբեր խորագրերում:

III. Պարբերականի հիմնական խորագրերը, դրանց նկարագրությունը

9. Պարբերականի հիմնական բաժիններն են՝

- 1) «Նորություններ»
- 2) «Վերլուծություն»
- 3) «Հարցազրույց»
- 4) «Պատկերասրահ»
- 5) «Հայտարարություններ»:

1) «ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բաժնում՝

(Վերնագիր + ամսաթիվ + ժամ + համառոտագրում + տեքստ + նկար)

Տեխնիկական լուծումները թույլ են տալիս նորությունները դասակարգել ըստ բնույթի, օրինակ՝ գլխավոր նորություն, ամենից շատը կարդացված նորություն, կարևոր նորություն, հասարակ նորություն և այլն, կամ առանձնացնել ըստ թեմաների, օրինակ՝ հայ-թուրքական հարաբերություններին առնչվող նորություններ:

2) «ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ» բաժնում՝

(Վերնագիր + ամսաթիվ + համառոտագրում + տեքստ + նկար)

Կառանձնացվեն երիտասարդությանը մտահոգող խնդիրները: Դրանց մասին պետք է գրվեն վերլուծական բնույթի նյութեր (հոդվածներ):

3) «ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ» բաժնում՝

(Վերնագիր + ամսաթիվ + համառոտագրում + տեքստ + հարց, պատասխան + լուսանկար)

Երիտասարդները պետք է հնարավորություն ունենան ծանոթանալու երիտասարդական ոլորտի փորձագետների հետ, նրանց տեսակետներին, կարդան իրենց խնդիրների լուծման ուղիների մասին և այլն:

4) «ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ» բաժնում՝

(Պատկերասրահի վերնագիր + ամսաթիվ + լուսանկար + լուսանկարի համառոտագրում)

Պետք է ներկայացվեն տեղի ունեցած միջոցառումների լուսանկարները:

5) «ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բաժնում՝

(Վերնագիր + ամսաթիվ + համառոտագրում + տեքստ + նկար)

10. Պարբերականն ունի 8 հիմնական խորագիր:

1) «Քաղաքական»

Ներկայացվում են քաղաքական լուրեր, որոնք անմիջապես առնչվում են երիտասարդությանն ու երիտասարդական քաղաքականությանը, կներկայացվեն կուսակցական երիտասարդության կազմակերպած միջոցառումները, անելիքները:

2) «Քաղաք»

Ներկայացվում են Երևան քաղաքի երիտասարդության հիմնախնդիրները, կազմակերպված հասարակական, սոցիալական բնույթի միջոցառումները:

3) «Մարզ»

Ներկայացվում են մարզային երիտասարդության հիմնախնդիրները, մարզերում կազմակերպվող միջոցառումները:

4) «Միջազգային»

Ներկայացվում են Եվրոպայում, Ռուսաստանում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, մեր հարևան երկրներում բնակվող երիտասարդների, երիտասարդական շարժումների, կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումները:

5) «Կրթություն»

Ներկայացվում են երիտասարդությանն առնչվող կրթական թեմատիկայով բոլոր նյութերը՝ բուհական առօրյա, ուսանողական կյանք և այլն:

6) «Մշակույթ»

Ներկայացվում են երիտասարդական մշակութային նյութերը, տարբեր մշակութային երիտասարդական խմբերում, թատրոններում, պատկերասրահներում ընդգրկված երիտասարդների անելիքները:

7) «Ժամանց»

Ներկայացվում են «ակումբային» երիտասարդության առօրյան, բոհեմային կյանքը, տարբեր երիտասարդական միջոցառումներ, ժամանցի կազմակերպում և այլն:


8) «Սպորտ»

Ներկայացվում են երիտասարդական սպորտային կյանքը, տարբեր մարզական խմբերում երիտասարդների ներգրավվածությունը:

IV. Ծրագրի իրականացման տեխնիկական բնութագիրը

Աշխատանքի անվանումը	Նկարագրությունը
Ստեղծագործական աշխատանք	«Երիտասարդ» օն-լայն պարբերականի խորագրերում և բաժիններում նյութերի պատրաստում և տեղադրում, ֆոտոռեպորտաժների պատրաստում, թարգմանչական և լրագրողական աշխատանքների կատարում:
Տեխնիկական աշխատանքներ	«Երիտասարդ» օն-լայն պարբերականի php MySQL ծրագրով ստեղծված cms-ի վարում: Կայքում «Հրատարակություններ» բաժնի ավելացում և վարում:
Ադմինիստրատիվ աշխատանքներ	«Երիտասարդ» օն-լայն պարբերականի խմբագրական, կայքի սպասարկման աշխատանքների համակարգում և վերահսկում, ինչպես նաև «Երիտասարդ» օն-լայն պարբերականի աշխատանքների ներկայացում էլեկտրոնային կայքերում, դոմեյնի, հոստինգի սպասարկում հետևյալ նվազագույն պարամետրերով՝ 7Gb, SQL DB 10, Subdomain 10, փոստարկղեր 150:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Մ. ԱՆԱՆՅԱՆ

ՆԱԽԱՀԱՇԻՎ
«ԵՐԻՏԱՍԱՐԴ» ՕՆ-ԼԱՅՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐԻ

№	Հոդվածը (հակիրճ նկարագրություն)	ՀՀ բյուջեից պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Միավորի արժեքի հիմնավորումը
1	«Երիտասարդ» օն-լայն պարբերականի խորագրերում և բաժիններում նյութերի պատրաստում և տեղադրում, ֆոտոռեպրոդուկցիայի պատրաստում, թարգմանչական և լրագրողական աշխատանքների կատարում, «Երիտասարդ» օն-լայն պարբերականի բիզնես MySQL ծրագրով ստեղծված cms-ի վարում, կայքում «Հրատարակություններ» բաժնի ավելացում և վարում, «Երիտասարդ» օն-լայն պարբերականի խմբագրական, կայքի սպասարկման աշխատանքների համակարգում և վերահսկում, ինչպես նաև «Երիտասարդ» օն-լայն պարբերականի աշխատանքների ներկայացում էլեկտրոնային կայքերում, դոմեյնի, հոստինգի սպասարկում հետևյալ նվազագույն պարամետրերով՝ 7Gb, SQL DB 10, Subdomain 10, փոստարկղեր 150	11000000	Հարցում 1
	ԸՆԴԱՄԵՆԸ	11000000	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ՝



Մ. ԱՆԱՆՅԱՆ

Փիար Մեդիա ՍՊԸ

Գնային առաջարկ

02.02.2015թ

«Փիար Մեդիա» ՍՊԸ-ն «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ին տեղեկացնում է, որ ընկերությունը կարող է 2015 թվականի ընթացքում «Երիտասարդ» օն-լայն պարբերական» ծրագրի հետ կապված աշխատանքներն իրականացնել 11000000 (տասանեկ միլիոն) ՀՀ դրամ գումարով ներառյալ «Երիտասարդ» օն-լայն պարբերականի խորագրերում և բաժիններում նյութերի պատրաստումը և տեղադրումը, ֆոտոռեպրոդուկցիայի պատրաստումը, թարգմանչական և լրագրողական աշխատանքների կատարումը, «Երիտասարդ» օն-լայն պարբերականի քիթ MySQL ծրագրով ստեղծված cms-ի վարումը, կայքում հրատարակություններ բաժնի ավելացումը և վարումը, «Երիտասարդ» օն-լայն պարբերականի խմբագրական, կայքի սպասարկման աշխատանքների համակարգումը և վերահսկումը ինչպես նաև «Երիտասարդ» օն-լայն պարբերականի աշխատանքների ներկայացումը էլեկտրոնային կայքերում, դոմեյնի, հոստինգի սպասարկումը հետևյալ նվազագույն պարամետրերով՝ 7Gb, SQL DB 10, Subdomain 10, փոստարկղեր 150:

Փիար Մեդիա ՍՊԸ

Ք. Երևան, Լենինգրադյան 22-28

ՀՎՀՀ 01014587

Տնօրեն Մ. Արշակյան

